Գր2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԿԳ/1

N 11/314-2021

ք. Երևան «26» 07 2021 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Օլանդա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վարոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **9 747 900 (ինը միլիոն յոթ հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը

(հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Տնօրեն Ա. Մարտիրոսյան

Տնօրեն Լ.Մարգարյան

Տնօրեն Ս.Ասատրյան

«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ
ՀՀ ԱՄՏ
գ. Երևան, Նաիրյան 104
ՀՀ Տիգ. Դեպ. աշխատանքի վերաբերյալ գործակալություն
հ/հ 900011301067
ՀԿՀՀ 01507079

«ՍՊԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀՀ Մարալիկ, Գագարինի 29
«Կիսաշինարկ», ՓԲԸ, Շիրակ մ/մ
հ/հ 24789188547400000
ՀԿՀՀ 05528443

ՀԱՅՏ

ԴԵՊՔ

Ընդերքօգտագործման և ընդերքամերձ տարածքների պետական գրանցման վկայական

9. Դոլոմիտ

ՀԱՅՏ

Ընդերքօգտագործման և ընդերքամերձ տարածքների պետական գրանցման վկայական

ՀԱՅՏԱՏԱՐ՝ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն Ս.Ասատրյանի տնօրենությամբ, գործելով ՀՀ օրենքների հիման վրա, հայտնում է հանրությանը, որ ստացել է հանրապետական նշանակության հանրային հանքավայրերի ընդերքի մասնավոր օգտագործման իրավունք՝ հետևյալ հանքանյութերի արդյունահանման նպատակով.

Հանքավայրի անվանումը	Դոլոմիտ
Հանքավայրի գտնվելու վայրը	Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք
Հանքավայրի գրանցման համարը	9
Հանքավայրի գրանցման ամսաթիվը	2024
Ընդերքի տարածքի մակերեսը	0.5 հեկտար
Ընդերքի խորությունը	4.7 մետր
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամկետը	5 տարի
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման ծավալը	5 000 խմ
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման ինտենսիվությունը	1 000 խմ տարեկան
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման մեթոդը	Բաց եղանակ
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման տեսակը	Հանքային
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման ինտենսիվությունը	1 000 խմ տարեկան
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման մեթոդը	Բաց եղանակ
Ընդերքի գրանցման վկայագրի գործողության ժամանակաշրջանում հանքանյութի արդյունահանման տեսակը	Հանքային

8.1 Դոլոմիտի հանքավայրը գտնվում է Գավառ համայնքի տարածքում, Գավառ-Սևան ավտոճանապարհի աջակողմյա գոտում, Գավառ գյուղաքաղաքից հարավ-արևելք 3 կմ հեռավորության վրա: Հանքավայրի կենտրոնական մասի աշխարհագրական կոորդինատները՝ X=4514000, Y=7470000, Z=1900 մ: Հանքավայրի տարածքը ներառում է 0.5 հեկտար մակերես: Հանքավայրի ինքնաթռիչքի տվյալներով հանքանյութի ընդհանուր ծավալը գնահատվում է 5 000 խմ: Հանքանյութի միջին խորությունը 4.7 մետր է: Հանքանյութի

Հավելված N 1
«26» 07 2021թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԿԳ/111/3/14-2021 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված ընդհանուր կիրառմամբ դասակարգման համարակալում	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	39141250/501	Զինվորական մահճակալ	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	Չափերը սմ (ԵxԼxԲ)՝ 190x70x42սմ: Մահճակալի գլխամասերը պատրաստվում են՝ - ոտքերը և կամարները՝ 32 մմ արտաքին տրամագծով պողպատյա խողովակից՝ 2 մմ պատի հաստությամբ, - լայնադրակները (լայնական ճաղերը)՝ 21 մմ արտաքին տրամագծով պողպատյա խողովակից, 2 մմ պատի հաստությամբ, - ճաղերը (ուղղահայաց)՝ 13 մմ արտաքին տրամագծով պողպատյա խողովակից՝ 1 մմ պատի հաստությամբ,: Ցանցի կարկասը պատրաստվում է 40x40 մմ չափերի 4 մմ հաստության պողպատյա անկյունակից: Ցանցի պատրաստման համար կիրառվում են 1,5 մմ հաստության 12 մմ ներքին տրամագծով կլոր տափօղակներ, որոնց վրա 4 կողմից հավաքվում են 3 մմ հաստության մետաղալարեր: Ցանցի 2 գլխամասերում օգտագործվող զսպանակները նույնպես պատրաստվում են 3 մմ հաստության մետաղալարից: Մահճակալի ոտքերին միջանցիկ ամրացվում են 4 մմ հաստության պողպատաթերթից պատրաստված 2-ական ականջիկներ՝ ցանցի կարկասը տեղադրելու համար: Մահճակալների ոտքերի վերին հատվածում ամրացվում են համապատասխան չափի մետաղյա անցումներ՝ կամարները և (կամ)	հատ	36990	3699000	100	ք.Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	100	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 15

				երկրորդ մահճակալը միմյանց միացնելու համար: Մահճակալը ներկվում է մոխրագույն նիտրոէմալով: Երաշխիքային ժամկետը 1 տարի							
4	44421300/505	Չհրկիզվող պահարաններ	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	Զենքի պահարան/пирамида/ պատրաստված 2 մմ հաստության պողպատյա թիթեղից, լայնքը 100 սմ. բարձրությունը 155 սմ, վերևի խորությունը 30 սմ, ներքևի խորությունը 60 սմ: Պահարանը բաժանված է 4 բաց դարակների, 1-ինը 24 սմ, ներքևում 28 սմ խորությամբ, 2-րդը 57 սմ, ներքևում 16 սմ խորությամբ, 3-րդը 86 սմ, ներքևում 12 սմ խորությամբ և 4-րդը 127 սմ, ներքևում 36 սմ խորությամբ: 1-ին դարակը 10 խորանով, նախատեսված ինքնաձիգի փողի չափով, իսկ 4-րդ դարակը 10 խորանով, նախատեսված խազ կոթի չափով: Գույնը մոխրագույն, շագանակագույն կամ կանաչ: Երաշխիքային ժամկետը 1 տարի:	հատ	140000	4200000	30	ք.Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	30	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 15
5	44421300/506	Չհրկիզվող պահարաններ	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	երկաթյա արկղ, փամփուշտների երկաթե արկղ պատրաստված 2 մմ հաստության պողպատյա թիթեղից, 51 սմ լայնքով, 61 սմ երկարությամբ, 31 սմ բարձրությամբ: Դրսի երկաթե կողպեքով և դեպի վերև բացվող դռնակով: Գույնը մոխրագույն, շագանակագույն կամ կանաչ: Երաշխիքայինժամկետը 1 տարի:	հատ	45000	450000	10	ք.Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	10	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 15
6	44421300/507	Չհրկիզվող պահարաններ	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	60x45x140 չափերի, պատրաստվում է 2 մմ հաստության պողպատյա թերթից: Պահարանն ունի 2 դուռ, որոնց վրա տեղադրվում են ներքին փականներ: Եռակցումներն ամբողջական, ոչ կետային, հղկված: Կետային եռակցում թույլատրվում է միայն փականի և դարակների հենակների ամրացման համար: Ոտքերը՝ մետաղական անիվներով (անիվի տրամագիծը՝ 60 մմ-ից):	հատ	99990	999900	10	ք.Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	10	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու

				Ծխնիները՝ ներքին, գլանաձև (Փ-16, L-30/30): Պահարանի յուրաքանչյուր խորշը բաժանվում է 2 հավասարաչափ մասի: Պահարանի մակերևույթը հարթ, գույնն ու տեսքը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:Երաշխիքային ժամկետը 1 տարի:							օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 15
7	44421300/508	Չհրկիզվող պահարաններ	«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ	Չափերը 140x78x40(ԲxLxԽ):Պատրաստվում է 2 մմ հաստության պողպատյա թերթից: Պահարանն ունի 2 դուռ, որից մեկը ներսից ամրանում է սողնակներով, իսկ մյուսի վրա տեղադրվում է ներքին փական: Եռակցումներն ամբողջական, ոչ կետային, հղկված և մշակված: Կետային եռակցում թույլատրվում է միայն փականի և դարակների հենակների ամրացման համար: Ոտքերը՝ մետաղական անիվներով (անիվի տրամագիծը՝ 60 մմ-ից): Ծխնիները՝ ներքին, գլանաձև (Փ-16, L-30/30):Պահարանի խորշը բաժանվում է 4 հավասարաչափ մասերի, պահարանը՝ շարժական անիվներով: Պահարանի մակերևույթը հարթ, գույնն ու տեսքը նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ:Երաշխիքային ժամկետը 1 տարի:	հատ	79800	399000	5	ք.Երևան, Արին Բերդի 3 նրբ. N5	5	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 105 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 15

Ծանոթություն

2. ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և մակնշմամբ, ապրանքի փոխադրումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից, ապրանքը ընդունում է պահեստապետը:

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ
ք. Մարալիկ, Գագարինի 29
«Արդշինբանկ» ՓԲԸ, Շիրակ մ/ճ

Հ/հ 2478918854740000
ՀՎՀՀ 05528443

Տնօրեն

Ա. Վարոսյան

Հավելված N 2
«26» 07 2021թ. կնքված
ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԿԳ/1 1/1/314-2021 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39141250/501	Զինվորական մահճակալ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
4	44421300/505	Չհրկիզվող պահարաններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
5	44421300/506	Չհրկիզվող պահարաններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
6	44421300/507	Չհրկիզվող պահարաններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
7	44421300/508	Չհրկիզվող պահարաններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ
ք. Մարալիկ, Գագարինի 29
«Արդշինբանկ» ՓԲԸ, Շիրակ մ/ճ

Հ/հ 2478918854740000
ՀՎՀՀ 05528443

Տնօրեն

Ա. Վարոսյան

Հ.Տ.

_____
ուսում, դասընթաց

_____
ղեկավարման

_____
Ամրագրող ընդունող

Հ.Տ.

_____
ուսում, դասընթաց

_____
ղեկավարման

_____
Գեղջուհի Ընդունող

Սույն գրությամբ հաստատվում է, որ ուսանող _____ ստորագրությունը դրված է իմ ներկայությամբ:

_____ Ամրագրող

Սույն գրությամբ հաստատվում է, որ ուսանող _____ ստորագրությունը դրված է իմ ներկայությամբ:

_____ Գեղջուհի Ընդունող

| N | Անուն, հայրանուն | Մասնակցություն դասընթացի | | |

Հավելված 3.1
20 թ. կնքված
« »
քննիչների հանձնաժողովի
նախագահի հրամանագրի

_____ ղեկավարմանատար	_____ Սարդարապետյան
_____ ազգանուն, անուն, հայրանուն	_____ ազգանուն, անուն, հայրանուն

Ընդունեց
հայտը դիպլոմատիկ ծառայության նախարարության
_____,
(կցագրության ամսաթիվ, ստորագրություն)

Հանձնեց

ՀՈՂԱՍԱԿ

Սույն պետական ընդունելության հանձնաժողովի 2 օրվա ընթացքում դիպլոմատիկ ծառայության թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա կազմվել է հետևյալ օրինակը:

Վերջնական գրավոր հանձնաշար	Անգլերեն լեզուի գիտելիքների ստուգում	Վերջնական գրավոր հանձնաշար	Անգլերեն լեզուի գիտելիքների ստուգում
Միավորներ	Գնահատականներ (կցագրություն)	Միավորներ	Գնահատականներ (կցագրություն)

Ընդունելության հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Գ. Գևորգյան
(ազգանուն, անուն, հայրանուն)

Ընդունելության հանձնաժողովի անդամներ՝ _____ Ս. Ի. Սարգսյան
(ազգանուն, անուն, հայրանուն)

_____ Ա. Ա. Հարությունյան
(ազգանուն, անուն, հայրանուն)

Ամենամյա դիպլոմատիկ ծառայության ընդունելության հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Գ. Գևորգյան